ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆԴԱՓԱՐԹՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան 4 տոլար Թղթադրամ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարին. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժանդիմները կանխիկ կը վճարուին։ Վերամնայ կամ ետաոնայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց սակ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 76

1886 ՄԱՅԻՍ 12

(ԱՊՐԻԼ 30 Հ. Տ.)

ՀԱՅԵՐԵԱՑՔ

կը հրատարակուի Ե. և Երթ. օրեր

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և Ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կոտիժ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Ցամակ կամ ծրար պէտք է պրիել խմբագրութեան հետևեալ հասցեով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մարսէյլ տօնախմբութիւնների մէջ.—Նամակ Ռուսիահն (Մոսկվա). — Նամակ Աթենքեահն (Վիէննա). — Նոր թատրոնական թիւններ.—Արեւելեան խնդիր. — Արտասահմանի լուրեր.—Առեւտրական. —Մանուածմներ:

ՄԱՐՍԷՅԼ. ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ

Շաբաթ օրէն սկսած մինչև երեկուշաբթի գիշերը Մարսէյլ քաղաքը տօնախմբութիւնների մէջ էր. նախարարների գալուստը, հողագործական ցուցահանդէսի բացումակատարութիւնը, ծաղկեմարտը, նաւարշաւը, գիշերային լուսավառութիւնները բոլորովին կերպարանափոխած և մի արտասովոր չարժման ու ոգևորութեան մէջ դրած էին Մարսէյլը։

Երե. օր, ժ. 11ին մօտիկ, հանրային չինութիւնների նախարար Գ. Գայհօ, թղթատարական և հեռագրականնախարար Գ. Կրանէ և ելևմտականնախարար Գ. Բէյլբրալ հասան Մարսէյլ և երկաթուղու կայարանը ընդունուեցան Գ. Նահանգապետէն և իր ժողովականներէ, գինուորական հրամատար գօրավար Գ. Քօլօմպէն, քաղաքապետէն և իր ժողովականներէ և այլ բազմաթիւ պաշտօնական անձերէ, ժողովուրդը խռնուած բազմութեամբ լցուած էր Մէնի քալա տրոյէն 21 Քնդանօթների արձակումով ողջունուեցաւ իրենց գալուստ։ Գինուորականները իրենց դրօշակներով և Մարսէյլեզը երգելով առաջորդեցին նախարարներին դէպի նահանգապետութեան ապարանքը, անցնելով Քանըպիէրի և Մէն-Ձէրէօլի փողոցներէն որոնք զարդարուած էին դրօշակներով և ծաղիկներով։

Գ. Նահանգապետը մի ճաշ տուաւ նախարարներին որմէ յետոյ նախարարներին ներկայացաւ մի պատուիրակութիւն այն մասնաժողովի կողմէն որ կազմուած է բարձրելու հոմար արմաւիքների վրայ ունեցած տուրքը ուսումնասիրելու դէմ։ Գ. Գայհօ պատասխանեց թէ Նախարարական ժողովը դեռ ունէ մի որոշում տուած չլինելով, չկրնար ինք պատասխանութիւններ տալ այդ նկատմամբ։ Գ. Կրանէ և Գ. Բէյլբրալ իրը երեք փոխանակ Գաշ-Տիւ-Թօնի, խոստացան Մարսէյլի հասարակութեան իրենք պաշտպանել և հնարաւորը իրենք ալ նախարարական մարմնի անդամներէն են, խոստացան նոյն իսկ Խորհրդարանի քննչէն հարուածել կատարեալ թեան ծրագիրը երթէ մի այդպիսի ծրագիր բերել Խորհրդարանին։ Գատաստութիւնը այս պատասխանի վրայ գոհութեամբ և հնարհակալութեամբ մեկնեցաւ։

Այս տեսակցութենէ յետոյ, նախարարները այցելեցին հողագործական և Հիսկան մրցման ցուցահանդէսներին ուր Colombe ընկերութիւնը ի պատիւ իրենց մի խումբ աղանիներ խաղցուց Անկէց այցելեցին Գեղարուեստներու ցուցահանդէսին և Արհեստագիտական ցուցահանդէսին։ Այս ամեն տեղերէն ալ չատ գոհ ելնելով, Գ. Գայհօ Մարսէյլցիներին պատուաբեր և քաջալերական խօսքեր խօսեցաւ։

Շաբաթ երեկոյ գիշատուր փողոցները զարդարուած և չքնաղապէս լուսաւորուած էին։ Ժամ 9 ին, «գարնան գալուստը» ներկայացնող կառքը, ծաղիկներ, գինուորական նուագածուներ, 400 Հագակիրներ և անհուն ժողովուրդի ուղեկցութեամբ, երթևեկով և ծաղիկով անցան Քանըպիէրէ, Մէն-Ձէրէօլ և այլ փողոցներէն և եկան նահանգապետութեան ապարանքի հրապարակը ուր գտնուան աւետարեր կառքը գոր 6 ապիտակ ձիեր կը քաշէին, կանգ առաւ և իր մէջէն չատ կարճ ակառ գուրս ցայտել հրեղէն խուրձեր որոնք երփներանգ լոյսեր կը ցոլացնէին հանդիսատես բազմութեան վրայ։ Նոյն միջոցին գինուորական նուագածութիւնն ալ «Մարսէյեզ»ով կոչ արաւ ժողովրդին։ Այդ ժամանակ նահանգապետութեան սպասրանքին մէջ նախարարներին սրբուած խնջոյքն ալ վերջացած էր և «գարնանային կառք»ը վերադառնալով Բալէ ուր Քրիսթալի առջև, այնտեղ ակառ Գիմութեան պարահանդէսը ինչպէս արդէն կարգադրուած էր։

Կիրակի օր, կէսօրէն յառաջ, Մեծ Թատրոնին մէջ Գ. Գայհօի նախագահութեամբ մեծ հանդէսով մրցանակները բաշխուեցան հողագործական ցուցահանդէսի մրցման մասնակցողներուն արժանաւորագոյններուն։

Կէսօրին, քաղաքապետութիւնը մի չքեղ ճաշկերոյթ տուաւ նախարարներ հիւրերուն։ Սեղանին կը մասնակցէին 46 անձեր և զանազանների կեանքին խմուած ժամանակ, Մարսէյլ քաղաքին առաջնորդական անուանկետով հարկ եղած չինութիւնների խնդրին վրայ ալ խօսակցութիւն բացուեցաւ և նախարարները յետոյ երկուքը Գաշ-Տիւ-Թօնի էրեսփոխանները են նաև, բացատրեցին խոստումները որոնց բոլոր ջանքերը չնահայելու համար։

Ժամ 4½ ին ծաղկէմարտի համար գնացքը ճանապարհ եղաւ Քալ ուր Շարիթէ ընդէն։ Քանըպիէր, Մէն-Ձէրէօլ Ռօմ և այլն փողոցները ուրիկ կանցնէր չուն, պատուհանները, փողոցները, ամեն կողմ ահագին բազմութիւն լցուած էր. Մինչև Բրատօ և Բալ Գօրէյի հատածած բազմութիւնը հասնելու 200,000 կը հաշուեն։ Բազմութիւնը սահմանները պահպան կողմերէ շրջկատուած եկած էին ներկայ պտնուիլ այս ասիներին Գնացքին կառաջնորդէին 12 սահկաններ և Մասնաժողովին ծաղիկներով զարդարած կառքը, «Գարնան աւետաբեր»ը, որ կը ներկայացնէր մի ծաղկեայ կազմ Աֆրիտհեան կը գային երիտասարդներէ կառքը ուր կար մի խոշոր կազմ որի մէջէն դուրս կը բորբոքէին ծաղկազարդ երեխաները։ Բալէ ուր Քրիսթալի կառքը ուր կար ծաղկազարդ խճապատ բլուր մի չէնք։ Ֆրանքօ-զուէզերա կոմնատագածուների մի խումբ։ Ջուխտերական մի պեղեցիկ ամազանոց կը դող կառքը. Վենետիկեան մի. կոմսուլ (նաւակ) կրող կառքը. մասնաճառ արհեստաւորների կառքը զոր եզներ կը քաշէին և ուր կար մի ծաղկազարդ բլուր, մի հովուհի գառնուկներով և հովիւներով. Ազգային հաւկիրայների (Pionniers de l'Avenir) խումբին նուագածուները և հանդիսական թեան համար նոյնպատրաստած ծաղկազարդ կառքը որի վրայ գրուած էր Merci pour les pauvres և որին չորս պատող հաւկիրայների խումբը, որոց կընկերանային նաև գինուորական սպայներ, յատկապէս շինուած քառիներ ձեռքերնին բռնած և կամ ձողերի ծայրը անցուցած, կը հանգանակէին ազքատներին համար յօգուտ որոց կը կատարուին այս ասիներ։ Սալայատակներուն վրայ դրուած բազմութենէն, պատուհաններն և պատշգամներէն առջև խըռնուած հանդիսատեսներէն անձրևի պէս «աու»եր, և մերթ ընդ մերթ ծափահարութիւններ կը տեսնային փողոց գոցա հանդիսականներէն կը փոխանցին հաւաքները վերջապէս 15ի չափ կառքեր կազմած էին գնացքը որոց առջևէն ալ ձիերը, անիւները, միջի մասերը և ամեն կողմերն ծաղիկներով զարդարուած և ծածկուած էին։ Հանդիսատեսները վրայ ածուին բազմութեան ծափահարութիւններով կողջունէը իրենց և կառքերէն ալ փոխադարձաբար ծաղիկներ կը նետէին ժողովրդին։ Ձոյս կազմերէն բազմութեան կառքերը և ածուին բազմութեան եկած հաւաքուած էին Բարք Պօրելի ուր ծաղկէմարտը (bataille de fleurs) տեղի պիտի ունենար ժամ 4½ ին մի մինչև օրս ձրակուելով նշան տրուեցաւ ծաղկէմարտը սկսելու և անմիջապէս ծաղկազարդ կառքերն սկսան իրենց կռիւ, իրենց ձիշտութիւններ, իրարու դէմ արձակելով... ծաղիկներ և ծաղկեփաթիլներ։ ժամ 6ի առեներ նախարարները եկան իրենց ներկայութեամբ հանդէսին վայրը ուրկէ նաև Բարձրագոյնները չնորհեցին նախարարական կառքերն և ծաղիկներ և ծաղկեփաթիլներ տեղացին անոր վրայ։ Նոյն միջոցին Ազատնէաբերների մի քանի ընկերութիւններ սրտ այնտեղ մուտ եցած էին, ազատներուն մի մեծ բազմութիւն թող առին օդին մէջ։

ժամ 7 ին վերջացաւ ծաղկէմարտը և կառքերն մասնակցող կառքերն անցնելով մրցանակները վճռող մասնաժողովի առաջէն, վերադարձան իրենց տեղեր, փողոցներին մէջ ամենազարմանալի ծաղիկներն տրժանաւորելով. և ճանապարհին վրայ ալ իրենց ծաղկէմարտ կը շարունակէին մինչև իրենց վերջին գնտակ (ծաղկեփաթիլ) արձակելով նոյա դէմ առանք պատուհաններին կը յարձակէին իրենց վրայ ծաղիկներ տեղալով։

Գիշերը լուսավառութիւններ եղան գլխաւոր փողոցներու։

Երկուշաբթի առաւօտ նախարարները վերադարձան Փարիզ. միայն Գ. Բէյլբրալ կը մնայ տակաւին մի քանի օր Մարսէյլ։

Երկուշաբթի ցերեկին ժամ 2էն մինչև 6 ծովային մրցումներ և խաղեր եղան, թիավարութեան, լողալու

մըսումներ, նիզակախաղեր, և այլն։ Դիչերը ժամ 9 ին սկսան գիչերային ուռներըը. բոլոր նաւերը լուսաֆաշուքեներով պարդուած էին. ծովափը մեծ բազմութիւն հանդիսականներ. հրախաղերն դոյգդոյն լոյսեր ցոլացնելով օդին մէջ հիացում կը պատճառէին ամենքին։ Շատ երկար կը լինէր մանրամասնել այսոնց հանդէսին պարադայները. ոչք սիրելով ընդհանուր ակնարկ մի ևս դիչեր. ուսոի կը վերջացնենք ըսելով որ այս երեքօրեայ ուռնախմբութիւններին մէջ պարմանալի կերպով կը փայլէին Թրանսպայինների ընկերական ոգին, գեղեցկագիտական ճաշակը և ապրանքներին պաշտպանելու սէրը զոր դիտեն երևան բերել օգտակար միջոցներով։

ՆԱՄԱԿ ՌՈՒԻՆԱՆԻՆ

Մոսկվա. 1886 թ. Ապրիլ 18/30

Ապրիլի 17/29 ին այստեղի հայ հասարակութիւնը կատարեց մեր հոչակաւոր դիանական Միքոիչ Էմինի 50 ամեայ յոբելեանը։

Առաւօտեան 11 ժամից սկսած հաւաքւում էին Լազարեան Ճեմարանը. ամէն կողմից պատկառելի ծերունուն պատուղները։ Գեղեցիկ զարդարուած դահլիճում, որի ճակատին ոսկեայ չրջանակի մէջ, պատած դալարիներով զարդ էր ծերունի դիանականի իւղանկար պատկերը, ժողոված էին պրոֆեսորների, ուսանողների, վաճառականների, սիկիններների և օրիորդների, Ճեմարանի աշակերտների ևն. բազմութիւն։ Մօտ 2 ին մուտ գահլիճը ժողովրդին լուսաւորութեան նախարար (մինիստր) Դելեանովը (հայ) և մի քանի բազմից յուսոյ հանդիսականների ծափահարութիւններով ողջունելով մեծատաղ պատկառելի դիանական Մ. Էմինը, Սկսեցին կարդալ անհամար ուղերձներ, ճառեր, նամակներ, հեռագրներ աշխարհիս ամենածայրերից։ Մոսկվայի հասարակութիւն, զանազան գիտական ընկերութիւններ, ինչպէս «բնագիտութիւն, էթնոգրաֆիա և անթրոպոլոգիա սիրողների», «Ընագիտական», «Ռուսաց գրականութիւն սիրողների» և այլն ուղարկել էին իրենց պատգամաւորները չը-նորհաւորելու նորան և յայտնելու որ իրենց համար պատիւ են համարում ընդունել պ. իւրքիերին իրեն պատուելի անդամ վերոյիչեալ հիմնարկութեանց և ընկերութիւնների։ Կարդացուեցան, չնորհաւորական նամակներ աշխարհիս բոլոր ծագերից։ Կարդացուեցան Լ. Մ. Կաթոլիկոսից և Կ. Պօլսի Պատրիարքից ուղարկած չնորհաւորանքը և օրհնանքը։ Ղ. Ալիշանը իւր նամակի հետ ուղարկել էր և իւր գեղեցիկ «Սիսուան»ը։ Կարդացուեցաւ նիցցից Լօրիս Մէլիքօվի հեռագիրը, Մոսկվայի հայ ուսանողների ուղերձը և. ևն. ևն. Թուել բոլորը անհնար է։ Երբ վերջացաւ ընթերցանութիւնը (1), վեր կացաւ ալեզարդ ծերունին և դողդոջուն ձայնով, յաճախ յուզուած յայտնեց բոլորին իւր խորին չնորհակալութիւնն այն պատուի համար, որը նորա տյսր տուին և անկարող լինելով երկար խօսել, աւելացրեց միայն մի քանի խօսք իւր կենսագրութիւնից։ Այսօր նշանակված է Գանապարեան անկեալնոցում նիստ Մ. Էմինի անունով ֆօնդ կազմելու Թոշակաւորների համար։

Մ. Էմինը այժմ մօտաւորապէս 73 տարեկան է։ Ծնվել է Նոր-Ջուղայում, Պարսկաստանում։ Մինչև 15 տարեկան հասակը ուսում է առել Հնդկաստանի կալկուտայ քաղաքում։ Յետոյ խնդրել է հօրը որ նա ուղարկի իւրեան ուսում առնելու Ռուսաստան, Մոսկվա։ Հայրը ուղարկում է փոքրիկ Միքոչին մի Եվդոկիա Նաւով Ռուսաստան։ Եւ նա հասնելով Եվդոկիա, Նորվեգիայով, Ջինանդիայով հասել է Մոսկվա, ուր մտել է Լազարեան Ճեմարանը, որտեղ ուսումը աւարտելուց գկնի վերջացրել է իւր բարձրագոյն ուսումը Մոսկվայի Համալսարանի լեզուաբանական բաժնում։ Ուսումը աւարտելուց գկնի ուսուցիչ է եղել Լազար. Ճեմ. ապա վերատեսուչ Ներսեսեան սեմինարան մի քանի գիմնազիոններում. վերջապէս պրոֆեսոր Հայ գրականութեան Լազար. Ճեմ. Լիցէոնում։ Պատկառելի դիանականը իւր 50 ամեայ գործունէութեան ժամանակամիջոցում տուել է ամադին օգուտ ոչ միայն գիտութեան և իւր գեղեցիկ հետազօտութիւններով և թարգմանութիւններով, ոչ միայն ծանօթացրել է դիանական աշխարհը մի մինչև այն ժամանակ անծանօթ ազգի պատմական անցեալի և մտաւոր կեանքի հետ, այլ նա իւր հետազօտութիւններով ամադին գործ է տուել նաև մեր մէջ ազգայնութեան գաղափարին զարգանալուն։ Նա ոչնչացնելով տղայական, փտած, նախապարհեզային կարծիքները մեր ազգի պատմութեան վրայ, ցոյց է տվել թէ ինչ ենք եղել մենք ճշմարտապէս։ Մ. Էմինը առաջինն է համարձակ հարթել դէպի այն կուսական անտառը, որի անունն է հայկական գիտութիւն։ Եւ այդ հարթած ճանապարհով նորան հետևողները աւելի հեչտութեամբ քայլելով աւելի խորը պիտի թափանցեն այդ անտառի մութ խորքերը։ Մ. Էմինը կարապետ է հայկական գիտութեան։ Նորա գոյութիւնը մեր մէջ լաւ ապացոյց է որ լոկ խօսքեր և երևակայական բան չեն հայկական գիտութիւն և հայկական համալսարան ապագայում։

ԼԵՒՈՆ Ս—ԵԱՆՑ

ՆԱՄԱԿ ԱԹՈՏՐԻԱՅԻՆ

Վիեննա, 3 Մայիս 1886

«Արմէնիա»ի 57 թիւի մէջ պարսկաստանի Սալմաստ քաղաքից դրուած մի նամակը որ պատմում էր Ուրմիայի կառավար Թագաւորին Իմամ Կուլի Միրզայի բարբարոսական վարմունքը դէպի մի քանի հայ քահանայները, չատ անտարակոյս տպաւորութիւն պիտի անեցած լինէին ամենայն հայ անհատի և մանաւանդ մեզ Պարսկաստանցի հայերիս վերայ։ Ուստի այս տեսիլ տառապեալ նահատակ նոյն իսկ Ուրմիայից տեղեկութիւն էի խնդրած և որպ պատասխանը պարտ անձին կը համարիմ ձեզ հաղորդել։

Ուրմիայի կառավարչի տրած բարբարութիւնները չատ աւելի մեծ էին քան ինչ որ ձեր պարտ նամակագիրը հաղորդած էր։ Բայց այն քահանայների դիւղից երկու հայեր Դաւիթ գնալով եղելութիւնը Մեռոմը եպիսկոպոսին յայտնում են, ուրը իսկոյն յայտնում է Դաւիթի կառավարութեան և չուտով թէ Ուրմիայի կառավարը և թէ իւր մեղանչական Գաղլը-խան զօրապետը բռնատրուած Դաւիթ են տանում, ուր կը յուսամ որ իւրեանց արժան պատիժը պիտի կրեն։ Բայց դեռևս և դործը չի վերջացաւ, քանզի մնացեալ մոլլաները (հոգևորները) տեսնելով պատից կառավարութեան այդ տարօրինակ հրամանը, աւելի զայրանալով սկսեցին բայ անել մկկիթների դռները և ժողովրդին վրէժխնդրութիւն քարոզել դէպի մեր վաճառական քրիստոնեաները, և խեղճ քրիստոնեաները տատրկ ահի մէջ էին, քանզի մահմետականները կամենում էին թալանել և ապտնել նրանց, մինչև որ Թէհրան հեռագրեցին այս անկարգութիւնը, որտեղից իսկոյն Պարսից Թագաւորը ուղղակի հեռագրեց Ռուիիայի բոլոր մոլլաներին խէ «եթէ նրանք համարձակին որ և իցէ մի քրիստոնէին մեռնեցնելը նեղութիւն տալու, այն ժամանակ չի պիտի կարողանան պատուել Թագաւորի առատութիւն վրէժխնդրութիւնից» և այնուհետև մոլլաները վերջ տուին իւրեանց յիմար քարոզութեան. բայց այսու ամենայնիւ մահմետականաց մոլեռանդ մասը կրկին չարունակում է իւր յիմար վրէժխնդրութիւնը, այսինքն ուր մի հայ են տեսնում, սկսում են չարչարել, և գիչերով մահմետական ազաղակները կոչտատում Թալանում են խեղճ հայ գիւղացիների առ-ցուստքը և այլն։

Իսկ եթէ հարցանէք թէ այս բոլոր չարեաց պատճառը ու մեղաւորը ո՞վ է, ես ի բոլոր սրտէ պիտի պատասխանեմ թէ նոյն իսկ Հայերն են, իւրեանց լուռ և սրտկային բնաւորութեամբը, քանզի երկար տարիներ այսպէս միշտ համբերել են նոքա մահմետականների գրկանաց, կողոպտութին, չարչարանաց և այլն առանց որ և իցէ դիմադրութեան կամ բողոքման, իսկ այժմ հէնց որ հայերը սկսում են իւրեանց իրաւանց և պատուոյ համար որ և իցէ մի բողոք կամ ընդդիմութիւն անել, դա իւրեանց հարևան մահմետականաց աչքում մի սրտապոյր կարգի բան է և բնաւում, և նրանք կարծում են թէ հայը իրաւունք չունէ որ և իցէ մի բողոք յայտնելու իրեն եղած զրկանաց մասին։ Եւ սրդէն թուտակներից մի քանի տարի առաջ Ուրմիայի կառավարչը՝ այժմեան Ատրպատականի կառավար Ամիր Նիզամն էր, որ իւրաքանչիւր թուրքերից սպանուած մի քրիստոնէի արեան գինը երեսուն և վեց (36) թուման որոշից, և այս որոշումից յետոյ ամենայն մահմետական պատրաստ էր մի քրիստոնեայ սպանելու 36 թուման տուած գին վճարելով և եթէ պատահմամբ քրիստոնեայ սպանող մահմետականը աղքատ էր վճում, յայնժամ հաւաքվում են միւս բոլոր հարևան մահմետականները և իւրաքանչիւրը մի քանի կոպէկ վճարելով լրացնում են սպանուած քրիստոնէի արեան գինը և այս երեսուն և վեց թուման մի մասը և այս գործառնէն էր անուշ առաջ Նազմ ու Զապտիէ տալիս էին խեղճ սպանուած դիւղացու ընտանիքին։ Եւ այս մասին ոչ մի քրիստոնեայ չէր բողոքէր ու այս անկարգ որոշումը մինչև օրս ոչ Դաւրիժի և ոչ Թէհրանի կառավարութեան չէր յայտնեցին, և կառավարութիւնը ինչո՞վ է մեղաւոր, եթէ նա բոլորովին անտեղեակ է խեղճ քրիստոնեայ դիւղացիների կրած վիշտերից։

Արդեօք պարսից տէրութիւնը և, ինչպես Տաճիկները, կամենում է բռնաբարել իւր հայ հպատակների իրաւունքը. ոչ, բոլորովին ոչ, այլ ընդհակառակը, պարսից տէրութիւնը միշտ աչխատում է իւր քրիստոնեայ հպատակները պաշտպանել ու ապատ պահել ամենայն գրկանքներից և այս պատճառու միշտ յատուկ յանձնաժողովականներով, հրամայում է բոլոր դատաւորներին որ ոչխատեն չի վերդովել քրիստոնեաների հանգստութիւնը և ամենայն դէպքերում չը մերժեն իւրեանց պաշտպանութիւնը նրանցից։ Իմ ասածս աւելի հաստատելու համար կը դրեմ հետևեալը։

Դաւրիժի բոլոր պատկառելի հայերը կատարեալ հանգստութեան մէջ են, և կարող եմ ասել թէ երբեմն աւելի ապատ են քան նոյն տէրության պատկառելի մահմետականները. նոյնպէս և Թէհրանաբնակ հայերը. քանզի սոքա դիտեն իւրեանց իրաւունքը պաշտպանել և հակառակ դէպքում կը բողոքեն ուր որ հարկն է, այս պատճառու մահմետականները չեն կարող ոչ մի անկրկտութիւն անել։

Թուտակներս մի քանի տարի առաջ Պարսկաստանի Կարատագ գաւառում (Հայոց Փայտակարանն է) մի քանի մահմետական խաներ յափըշտակում են Հայ դիւղացիների անասուններըը. բայց այդ դիւղացիների մէջ Սարգիս անունով մի հայ կար, որը խելոյն իւր հետ մի ուրիչ հայ դիւղացի ընկերը առնելով ուղղակի Թէհրան գնալով մի ազերատպրսկերէն խնդրագիր են յայտնում եղելութիւնը Թագաւորին հարիւր Թուման այն երկու հայերին չնորհում է հանապարհում սրած ծախքերի վճարելն և առանձին հրամանագրով այն բոլոր խաներին բանտարկուած Թէհրան է տանում, ուր խաղիս պատժվում են և եղած գնասը հայերին վերադարձնելուց յետոյ, Թագաւորը հրամայում է որ մինչև տարեդարձն այն բոլոր Հայ դիւղացիները որ և իցէ մի հպատկին տատանորդ չի վճարեն, քանզի հայերի բնակուած դիւղերը, որք լինն հատ էին, պատկառում էին նոյն խաներին։

Եւ սրդէն սա և սորա նման հաղարաւոր օրինակներ կարող են բաւական ապացոյց լինել Պարսից տէրութեան անաչառութեան և քրիստոնէութեան. Թէև այժմ և կը պատահին անկարգութիւններ, բայց սոցա պատճառը ու մեղաւորը նոյն իսկ հայ դիւղացիներն են իւրեանց անհամեմատ լուռութեամբ և համբերութեամբը, և էլ աւելի Դաւրիժա-

(1) Ուղարկած դրութիւնների բազմութեան պատճառով անյարմար դատելով բոլորի ընթերցանութիւնը, մի մասը յետաձգել էին կարդալը ձայի ժամանակ, որ ասլաս էին ի պատիւ յարդելի իւրիւերին նոյն օրը երեկոյեան յայտնի ընտրութեան «Եզիմատ»ում։

բընակ նոցա հայ տրիւնակիցներբ իւրեանց անտարբեր բնաւթեամբ, որք աւելի հեշտութեամբ կարող են ևղերափիւնը հաշորդել ուր որ հարկն է, քայց չեն աներ։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՃԱՒԱՒՆԱՆՑ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիւրքիոյ մի քաղաքէն հայ երիտասարդներէ մի խումբ 182 ֆրանգ հանգանակելով լրեանց մէջ դրկած են Լոնդրատութեան նուէր զոր տասանք նախորդ չարաթի մէջ։

—Նոյնպէս Մանչեսթըրէն մի պատուական հայ վաճառական 20 ֆր. նուէր դրկած է Լոնդրատութեան ի քաջալերս։

—Մօնթրէալի հայ ուսանողական Ակումբի հասատած խնայապական մեռուկէն ստացաւ Լոնդրատութիւնս 10 ֆրանգ Մայիսի ամսական նպաստս։ Ապրիլի ամսականը արդէն ստացուած էր (Տեսնել «Արմենիա» Թ. 68)։

—Ռանգունէն (Պիրմանիա) ստացանք ի նուէր 200 ֆրանգի արժէքով մի չէք որ ներփակուած էր յետագայ նամակին մէջ.

Ռանգուն, 3/15 ապրիլ 1886

Խնդրեմ ծրարել ի սմա Թիւ. 00269 8/210· փոխանակագիր մի ի վերայ գանձապետաց Անգղիոյ գրամատան, ի պահանջման հասուցանելի, վասն ոմին անգ· ոսկւոյ· զոր չնորհ առաքեալ առաջիկ ի դեմոյ Ռանգունաբնակ ներքոյիչեալ մերազնեայ՝ իբրև ազգային պարտականութեան և երախտագիտութեան ամենաչնչին ապացոյց՝ առ ազգասէր «Արմենիա»ն, որ է շարունակութիւն «Արմենիա»ի 32 Թուոյ 26 աւելից·

Ցուցակ

Աբժ. և Սրբակրօն վիճակաւոր Խահակ քահանայ Թ. Ամիրաչեան	10

Ցարգոյ Գարունեան

Կ. և Ս. Բաղդասար	25
A. Friend	2
A. Friend	1
»	1
Դաւիթ Ե. Դաւիթ	5
Ոմն	5
C.	1
Ց. Ա. Էմին	5
Ոմն	5
Friend	1
Բարեկամ	2
Ս. Դաւիտ	3
Է. Ա. Էմին	5
Գրիգոր Խ. Թագէոս	7
C. S. Catchick	10
W. Shircore	3
Ոմն ևս դրամ մի	1
A. Friend (J. A.)	1
Մարգար Դաւիթեան	2

Ցարգելուհի Տիկնոյք

Մարգարիտ Մ. Տէր Մինաս	5
Ե. Ն. Ս. Յովհաննէս	2
M. E. C. Pusey	2

Գումարն է Ռուփիք 104

Նարտնակեի

Ցիշեալ փոխանակագրոյ գումար ութն սակւոյ գինն հատուցի 107—15—9 ռուփիք. իրաքանչիւր ռուփին 1/5 23/32 սակուի Ցաւել հատուցեալս է 3—15—9, և անցեալումն 0-13-9 լինի 4-13-6 ռուփիք, որ Ցայոյ միւս անգամ արտահանելին։

Արդարև այժմեան փոխանակութեան ձևան գգալի է. դի մէն մի հատ ռուպին գրեթէ ճիշդ 13½ ռուփիք անկանի, բայց յորմէ սակաւ ժամանակ առաջերայ ո՛և է եղանակ չէր դիտելով պարտաւորեցայ սովորական փոխանակագրով և օրէն սակով առնել։

Հանդերձ բարի ըղձմամբ՝ Թէ՛ վասն բարօրութեան և երկար կենաց ձեր, և Թէ՛ վասն բարգաւաճութեան և յառաջադիմութեան ազգօգուտ «Արմենիա»ի։

Մնամ ևն.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Արեւելեան խնդիրն սկսած է գործադնել մի ծանր կերպարան առանալ։ Ինչպէս նախորդ Թուով խնացուցած ենք Անգլիան, Գերմանիան, Աւստրիան և Իտալիոյ դեսպանները մեկնած են Ազէնքէն Հինգ պետութիւններին ներկայացուցիչներն, Ռուսիան ալ միանին, մայիս 9ի կիրակի օր յայտարարած են Հեղլեն կառավարութեան Թէ Ծովեզրեանցի պաշարումը սկսած է իրագէս Ահա իրենց ծանուցագրի իմաստը։

«Ազէնքի դահլիճէն մեր վերջնագրի տրուած պատասխանը գոհացուցիչ չգտնելով, հրամին տրուած է իրաքանչիւր նաւատորմիղի հրամանատարին որ Յունաստանի ծովեզրները պաշարեն յունական դրօշակ կրող ոևէ նաւի դէմ, սկսած Մայիս հրամանգատնէն սկսելով Ֆօլքն հրամանգանը և մինչև Յունաստանի հիւսիսային սահմանագլուխը, Էօպէի կղզին ալ միասին առնելով. նոյնպէս և արեւմտեան ծովեզրին վրայ, Կորնթոսի ծովածոցին մուտքը Յունական դրօշ կրող ոևէ նաւ ևթէ փորձէ ճեղքել անցնիլ պատշաճած դիրքէն, դրուելու վասնդին պիտի ենթարկուի»

—Վիէննայէն գրուած մի հեռագրի մէջ հետևեալը գրուած է· «Հետաքրքիր է իմանալ Թէ պետութիւնները ինչպէս պիտի կրնան պաշարել Յունաստանի բոլոր նաւահանգիստները քանի որ միջազգային արգի նաւատորմիղը բաւական չէ այդ դործողութիւնն կատարելու։ Նաև պիտոյութեան արժանի է որ այդ պաշարումէ պիտի ձերուսի Անգլիոյ և Աւստրիոյ վաճառականութիւնը որ մեծ մասով այդ երկու աղգերի նաւերն կը գործածէին յունական նաւահանգիստներին մէջ։ Մինչդեռ նոյն նաւատորմիղ պիտի տրգիլէ նաև Բիւզէնդիոն և հարաւային նաւահանգիստներն վօլօ գօրք և ռազմամիջոց փոխադրելը. իսկ յունաքէն փոխադրութիւնն ալ մեծ դժուարութիւններ կը պատճառէ Ցոյն կառավարութեան»

—Ցոյն կառավարութիւնը գօրքեր կը համախմբէ Թեսալիոյ սահմանները, միևնոյն ժամանակ մեծ պատրաստութիւններուն յայտարարելով Թէ ինք Ֆրանսայի տուած խոստումը յարգելով դիտաւորութիւն չունի խաղաղութիւնը վրդովելը բայց քանի որ Թիւրքիան յարձակումի նշաններ ցոյց կը տայ, պարտաւոր է ինք ևս կազմ և պատրաստ գտնուիլ իւր պաշտպանութեան համար։ Զօրքերը յանձնեն կերթան Թեսալիա, կասկածելով որ միջազգային նաւատորմը կարգիլէ ծովին կողմէն յառաջ եկնելը։

—Գ. տը Ֆրէյսինէ, մայիս 9ին ընդունեց Ալմանիոյ և Թիւրքիոյ դեսպանները և յետոյ դնաց Հանրապետութեան նախագահ Գ. Գրէվիի մօտ, տեղեկութիւն հաղորդելու համար արևելեան խնդրի ստացած արդի վճռակին վրայ։

—Անգլիական, ալմանական, իտալական և աւստրիական պատերազմանաւերը մայիս 9ին մեկնած են Սուտայի ծովածոցէն, պաշարումը դործադրելու համար։ Կը հաւատան Թէ ռուս ծովապետը չէ մեկնած։

—Գ. Տէլիեանիոյ հրաժարականը ընդունուած է Թագաւորէն։ Կը կարծուի որ նորերին գործերը նախարար Գ. Բարամիքալօբուլօ կը յաջորդէ իրեն։

—Գեորբատրգէն կը հեռագրեն Թէ Ռուս կառավարութիւնը չատ վրդովուած է տեսնելով Թէ հետզհետէ բրուսիական ղօրքերը կը համախմբուին բոլղարիական սահմանապետերու։

—Գ. տը Ֆրէյսինէն Փարիզ կանչեց Ազէնքի դեսպան Գ. տը Մոլինն, բերանացի հրահանգներ տալու համար։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Մատրիտի դատարանը մէկ մարդասպարանէց մէկ տարի բանտարկութեան, 1885 սեպտ. 4ին Բարօլինեան խնդրին պատճառով սրճանական դեսպանատան դէմ եղած Թշնամանքին պատճառով. իսկ դեսպանատան պահպանութեան պաշտօնն ունեցող ոստիկաններն հրամայուրը անպատրա պահակեց։

—Իտալիոյ մէջ քօլերան կը չարունակէ դեռ իւր կոտորածները. եւ մէկ եկած հեռագրի համեմատ, եւ մէկ Պրէնտիզիի մէջ մեռած չէ քօլերան ոչ մէկ մարդ, բայց Օսթինելի մէջ 3 մարդ, Վենետիկի մէջ 9 մարդ բռնուած են և 7 մեռած. Պարիի մէջ 35 բռնուած և 11 մեռած։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՑԻՍ 4ԷՆ 11

ՆԵՐԱՑՈՒԹԻՒՆ

==

ԲՈՒՐԴ. Գործերը միշտ սահմանափակ ընթացով օրուան պէտքերու համապատասխանող տեսակներէ միայն վաճառուածներ կըլլան. չաբթուս վաճառուածները 400 հակի չափ են, ոլոյմէ 100 հակ Նուխայի երկրորդ կարուտ 105 ֆր. 130 հակ Խարասան ճերմակները 140 գունաւորները 130 ֆր. 40 հակ Մուսուլ Պաղտատ 157½–160 ֆր. 30 հակ Հալէպիւտացուած 185 ֆր. 100 քիլօն։ Ամեն տեսակէ հրապարակի մէջերքն է 17,000 հակ։

ԲԱՄՊԱԿ. Անկարեւոր գործեր միայն կըլլան և հրապարակի մէջերքն է 6500 հակ։

ՄԵՏԱՔՍԵԼԼԷՆ. Ճաբթուս վաճառմանց մէջ կայ 55 հակ մեռաքս զանազան տեսակներէ, օրուան գիները մեռաքս Սիրիոյ 51–53, Նուխայի 42–47, Փրիզոն ըստ տեսակին 7½–10, Ըէչտի Փրիզոն 6, Նուխայի Թոնիքալ 4, 15–4, 20 և չթար 3, 25–3, 30 ֆր. քիլօն։

ՑՈՐԵՆ. Հրապարակը կատարեալ Թուլութեան մէջ է· գիները ըստ տեսակին 14–19 ֆր. 100 քիլօն։

ԿԱՆԵՓ. Կը փնտուի, ըստ տեսակին 55–65 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine)· Քիչ պահանջ կայ, գիները ըստ տեսակին 12½–14½ ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs)· 12¾ ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ· Թոյլ է, գաուսած Տրապիզանի տեսակները 23 ֆր. 100 քիլօն։

ԹՈՒՉԱԿՆԵՐ (alpiste)· Ըստ տեսակին 24–25 ֆր. 100 քիլօն։

ՇՈՒՇՄԱ (sésames). 38–38½ ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ· Անուանական գին 27 ֆր. 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՑ· Պահանջ կայ, 26½–27 ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Զը կոտրածները 36 և կոտրածները 84–85 ֆր. 100 քիլօն։

ԾԻՐԱՆԻ ԿՈՒՏ· Ըստ տեսակին 56–65 ֆր. 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՑ. 90–105 ֆր. 100 քիլօն։

ՄԵՂՐԱՄՈՄ. 150–160 ֆր. 50 քիլօն։ Բոլորովին անգործ է։

ԱՑԻՒ ՄՈՐԹ. 22–30 ֆր. տուգիանն։

ԱՐՏԱՑՈՒԹԻՒՆ

==

ՇԱՔԱՐ. 3 քիլանոցը 51 և 2 քիլանոցը 52 ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ· Գիները բարձրացան, ըստ տեսակին 46–56 ֆր, 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ· Ըստ տեսակին 3, 40–4, 20 ֆր· քիլօն։

ՊՂՊՂՂ· Հասատ է, 82–87 ֆր, 50 քիլօն։

Գ.

Ա Զ Գ

«Արմենիա»ի բաժնորդ գլուխ ցանկացողներին դիւրութեան համար, ո՛րոշեցինք նոր բաժնորդագրութիւններն ընդունիլ իւրաքանչիւր ամսի մէկէն սկսելով։ Նախորդ թիւերն կը ղրկուին անոնց միայն որք յատկապէս փափագ կը յայտնեն։

Ա Զ Գ

Խմբագրատունը փոխադրուած լինելով Vacon փողոց թ. 50, կը խնդրուի ղրկել նամակներն այսուհետև Rue Arménie, 2, այլ պարզապէս հետևեալ հասցէով.

M. PORTOUKALIAN, Rédacteur du journal «Arménia». MARSEILLE (FRANCE).

ՄԱՆՈՒԿԼ ՄՒՐԱՆՈՒԹԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՐՆԱԿ ԳԱՒԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԻՔ ՍԱՐԻՆ ԵՒ ՁՈՐԻՆ ՀՆԻՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՊԻՏԱՆԻ ԴԻՏՆՈՂ

= =

Մասն Ա. Բ. Գ. (առարտո)

Հայաբնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, չէն և ամայի վանօրէից նկարագիրն, առանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Ազգ. գործ մի է, ամենակարևոր և հետաքրքրական գրուած չքնահայեաց և շատ նուրբ տեսութեամբ ազգանի ամեն Հայու յառաջակի վերծանութեան։

կը գտնուի բոլոր գրավաճառաց քովկեդրոնատեղին է Պօլիս Գահէէ–գափու հայագործի փուան դէմ Գ. էֆ. Ճոնեանի վաճառատուն, թիւ 11։

Գինն — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՅԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »

Այս ծախուին Պարսկ., «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Օտար բաղաքացիներին կը ղրկուի փոստով, երէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրքական կամ ռուսական փոստի բղաղրոշմ ղրկեն «Արմենիա»ի խմբագրութեան։

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Ինչպէս արդէն յայտարարած էինք, Տփղիսի «Մշակ» լրագիրը սկսած է հրատարակուիլ նոր տարու սկիզբէն, խմբագրապետութեամբ Մեծ. Պ. Գրիգոր Արծրունեան։

«Մշակ»ը այս տարի կը հրատարակուի չաբաթն երեք անգամ և տարեկան բաժնորդագինն է, ամեն տեղի համար, ռուսական թղթադրամ 10 րուբլի և կամ Ֆրանսական 25 Ֆրանկնոց թղթադրամ որ կարելի է ապահովագրուած նամակով ղրկել խմբագրութեան հետևեալ հասցէով.

Rédaction du journal arménien «Mschak». Tiflis (Caucase-Russie).

Պ. Գ. Արծրունեան թէ՛ խմբագրական հմտութիւնը և թէ՛ հայրենասիրական եռանդը հանրածանօթ լինելով, աւելորդ կը համարինք խօսիլ այդ նկատմամբ և կը յուսանք որ շատերը պիտի փութան բաժնորդ գրուիլ մի այդպիսի կարևոր թերթի, նոյն իսկ իրենց օգտի համար։ «Մշակ»ի վերաբերեալ հրատարակութիւն մի այնպիսի ուրախալուր երևոյթ պատճառած է Ռուսաստանի մէջ որ զանազան քաղաքներէ փութացած են հեռագիրներով յայտնել իրենց չնորհաւորութիւնները «Մշակ»ի խմբագրութեան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՏՈՐ Ա.

Կենդանագիր նիւսուածաբանութիւն եւ մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն։

Աշխատասիրեաց Ն. Տաղտարեան

Հայերէն բնական պատմութեան մը անհրաժեշտ պէտքն ի վաղուց անտի կը զգայաւէր. դոհութեամբ կը տեսնեմք որ Պրն. Տաղտարեան կաշխատասիրէ լրացնել այդ թերութիւնը, հրատարակելով այս կարևոր դործքն, որ կը բաղկանայ չորս առատ հատորներէ. Ա.—կենդանագիր նիւսուածաբանութիւն եւ մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն. Բ.—կենդանաբանութիւն. Գ.—բուսաբանութիւն. Դ.—Հանքաբանութիւն եւ երկրաբանութիւն. Մէն մի հատոր պիտի բաղկանայ 35 մեծագիր տպագրեալ թերթերէ, պարունակելով 350 է աւելի գեղեցիկ պատկերներ։ Առաջին հատորի հրատարակութեան սկզբնն ձեռնարկուած է և առաջին տասը թերթերն լոյս տեսած են։ Այս հատորն իր վերջը պիտի ունենայ նաև 1000 գիտական բառերէ բաղկացեալ բազմալեզուեան բառարան մի և գինը պիտի լինի 40 դրշ. իսկ կանխաւ իրը բաժանորդ վճարողայ համար 30 դրշ.։ Բաղմաթիւ օրինակ գնողայ համար մանաւոր զեղչ կը լինի։ Իւրաքանչիւր թերթի գինն է 70 փարա։ Կեդրոնատեղին է «Գիտական Շարժման» սենեակը, Կ. Պօլիս, Մէրճան, Դաար—Գումբուրխանե։ կը գտնուի նաև Փրէնկեան վաճառանոցը, Պիպէճեանի գրասենեակը, Աբալեանեան Թղթավաճառանոցը, և Պահչէ Գափուի Ջրափաճառաց քով։—

JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1
SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences. Bureaux, Écoles, etc.

Articles pour Photographes, peintres et ingénieurs.

Cartes Géographiques et maritimes, Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissoins de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

Grand assortiment de Musique des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc., etc.

On se charge de toutes sortes de Commissions.

ՏՆՕՐԷՆ—ԹՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ.
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.

IMPRIMERIE DU MIDI

TYPOGRAPHIE

M. SCHICKLER

LITHOGRAPHIE

Rue Vacon, 50. - Marseille

Prix-Courants
Factures
Circulaires Commerciales
Entêtes de Lettres
Enveloppes

Spécialité pour Brochures, Catalogues et Mémoires

OUVRAGES DE LUXE

JOURNAUX DE TOUS FORMATS

Cartes de Visite et d'Adresse
Lettres de Mariage et de Naissance
Mandats

LETTRES DE DÉCÈS EN 1 HEURE

Affiches en noir et en couleurs, Prospectus

AVIS. — *La Maison se recommande par la Netteté de son Travail et par la prompte exécution des Commandes*